

արտերուն մէջ ասոնք առաւել ևս քաղմացած ըլլան, և այնքան առաւել՝ որբան մօրացորենի մշտկութիւնն յառաջացեր է. վասն զի՞ ի վլր քան զամենայն ասով կը սնանին:

Սկիւռք այնպիսի ճարտար ու ճարպիկ կենդանիներ են, որ չըսենք անհնարին, սակայն ամենադժուար է թէ առանձին որսորդ մը կարենոյ ասոնց. մէ ձեռք ձգել: Վասն զի վտանգներէ փախչելու համար ամենայն հնարք կը բանեցընեն. ծառերու բռնին ետևը կը պահաւըտին, և որպէս զի կարենան թշնամոյն ձեռքէն ազատիկ կը սկսին պտոյտներ տալ, բայց միշտ ծածկեալ մնալով յաշաց. և վերջապէս ցատկելով մը այնպիսի երագութեամբ ծառին գագաթը կը բարձրանան՝ որ իսկոյն ողջ առաջը իրենց բնակորանը հասած են: Հոն անյարժ ու անտեսանելի կը կենան՝ մինչև որ վտանգի հետքն ալ մէջտեղէն վերցուի:

Յիրաւի, թէպէտ և Սկիւռք ծառերէն երկրիս վրայ շատ չեն իշնար, սակայն երկրէս աւելի՛ ի յրոյ կը վախեն. և երբ զայն կարել հարկազրութի՞ն զարմանալի կերպով կը լողան. ծառոց կեղեր լաստափայտի տեղ կը ծառայեցնեն և անով զլուրը կ'անցնին: Պիտի ֆոն և ուրիշ քանի մը հեղինակներ կ'ըսեն, թէ ասոնք լողալու միջոց իրենց

պոյը զեկի տեղ կը գործածեն. սակայն ասոնց ըստածը սայոյ չէ: Քլէն մեզ զայս ինչ կաւանդէ, թէ երլ Սկիւռք յրէ անցնիլ ուզեն, թեթև փայտ մը մէջը ձգելով՝ անոր վրայ կը նատին. և իրենց պոյը շարժելով առադասատի տեղ կը ծառայեցընեն. և այսպէս խաղալ յրաց երեսէն կ'երթան:

Բայց եթէ այս միջոցիս գիտաւածով զօրաւոր հոգմ մը շնչէ և կամ ծովը խոլովիլու ըլլայ՝ երամովին ջրոց մէջ սուզելով կը խցդուին:

Սկիւռք հիւսիսային Ամերիկայի մէջ, յլսիս, յեւրոպա և յԱրկիրկէ լի են, թէ բազմատեսակ զարմերով, և թէ միանգամայն նոյն տեսակաց վերջին աստիճանի բազմանալով: Իրենց քաղցրութեան, աշխուժութեան ու գեղեցկութեան համար մարդուս սիրելի եղած են. և այն պատճառաւ զառնք տուներու մէջ կը պահեն, և կ'ընտանեան: Յիրաւի, երբեմն մարդկանց ավետալի վնասաւց պատճառ կ'ըլլան, ինչպէս ըսինք, սակայն ունին նաև իրենց օգուտներն. տասնց միուը պատուական և ախորժելի կերպակուր կ'ըլլայ. մորթերնին արուեստով պատրաստուել ետև մարդուս հազար աեսակ պիտոյից կը ծառայէ. և իրենց պոյի մազերը՝ նկարչաց վրձիններ շինելու կը դործածուին:

Հ. Պ. ՔԱԶՅԱՆՅԵԱՆ

Ներկային և անցելոյն ձամապարհորդութիւնք: — Թէ որդափ արագութեամբ՝ համեմատութեամբ անցելոյն այժմ երկայն շամբարդութիւնք կը կատարուին, հետեւալ հաւուեն կրնայ իմացուիլ: — Ասկէ կէս դար առաջ կամ միշտ ըսելով 1830 տարւոյն մէջ՝ Անդրկայս Բարեյուաց Գլուխն երթալու համար՝ գրեթէ երկուու ու կէս ամիս պէտք էին: ՚ի Պոմպէյ Հնդկաց երթալու համար չորս ամիս, յիւսարավիա՝ 130 օր. միջեւսաներկայ ժամանակս երեք շարժեան մէջ Բարեյուաց Գլուխն 18 օրուան մէջ՝ ՚ի Պոմպէյ և 43 օրուան մէջ՝ ՚ի Սիւնէյ (Սաստարավիա) Կ'երթցուուի: — Դարձեալ, հոյնպէս յԱնդրկայ մեկնելով 40 օր պէտք էին հասնելու համար ՚ի Նիււ-Եօրը, 42 օր՝ ՚ի Ճիշմայքա, 56 օր՝ ՚ի Խիշյ-Ժանիէրոյ, 110 օր՝ ՚ի Վալբարայեցյ, իսկ այժմ՝ 10 օրուան մէջ կը հանուի ՚ի Նիււ-Եօրք, 18 օրուան մէջ՝ ՚ի Համայնշիքա, 21 օրուան մէջ՝ ՚ի Ոիփոյ-Ժանիէրոյ և 39 առուրց մէջ՝ ՚ի Վալբարայեցյ. որ է ըսել՝ հիմակուան ձանապարհորդութեանց համար պէտք եղած ժամանակն միջն հաշուուի երրորդ մասն է այն ժամանակին որ կարևոր էր յիսուն տարի առաջ: